

վար Հայոց : Յետ այնորիկ առաքեաց Ղազան Կեսպանս հանդերձ թղթով առ Պապն Հռոմաց եւ առ Թագաւորս արեւմտեան , յորում յետ յայտ առնելոյ զմտանել իւր յերուսաղէմ , եւ տիրել երկրին հրաւիրէր զնսսա գաւ եւ միաբանիլ ընդ իւր ընդդէմ Սուլթանին եգիպտոսի : Թէպէտ եւ ուրախ եղեն յոյժ Պապն եւ Թագաւորքն ընդ այնպիսի յաղթութիւնս նորին եւ միաբանեալ Թագաւորացն , բայց ոչ ոք 'ի նոցանէ յօժարեցաւ ելանել պնտերազմաւ ընդդէմ այլազգեաց (1300) :

Եւ 'ի սմին ժամանակի ազատամբեալ եգիպտացւոց ըսպանին զՍուլթանն իւրեանց զՍալիլ , եւ նախարարք կառավարէին զտէրութիւնն , զի որդի նորին տղայ հասակաւ փախուցեալ ամրացաւ 'ի քաղաքն Գերէք , եւ 'ի հասանիլ յարբունս եմուտ յեգիպտոս , եւ նստաւ յաթոռ իշխանութեան հօր իւրոյ :

Եւ մինչդեռ էր Ղազան յերուսաղէմ , եհաս առ նաւուր թէ ազատամբեցան Պարսիկք : աճապարեալ նորա եւ 'ի ճանապարհ , եւ հասեալ 'ի Գամասկոս հիւանդացաւ , ուր եւ մեռաւ իսկ : իբրեւ տարածեցաւ գոյժ մահուան նորին , Թագաւորն Հայոց եւ յերուսաղէմէ եւ գնաց յերկիր իւր : Տե՛նաւ 'ի Պարսկէն . Հ . Մ . Զաճէան . Հար . Գ . 208 :

Ի հեռանալ արքային Հեթմոյ բաղմութեամբ զօրաց ընդ Թաթարս յաշխարհէ Կիլիկիոյ , այլազգիք ոմանք սլաքապ դտեալ զաշխարհն եւ դիպող ժամ , բաղմութեամբ զօրաց արշաւեցին 'ի սահմանս նորա , եւ հրոյ ճարակ տուեալ այրեցին զքաղաքն Լամբրուն եւ զչրջակայս նորին (1300) , որպէս աւանդի 'ի յիշատակարանի Ճառընտրի միոյ որ առ մեզ , գրեալ 'ի Ստեփաննոսէ , եւ նա ինքն Գրիշն ժամանակակից եւ ականատես ասէ . Հազիւ կարացաք զերծանիլ օգնութեամբն Աստուծոյ , եւ կամք այժմ յերերման եւ 'ի սասանման : Վասնորոյ այս արկածք տարադէպք մեծաւ մասամբ վշտացոյց զսիրտ արքային Հեթմոյ , յոյր սակա աճապարեաց մեկնիլ 'ի սահմանացն երուսաղէմի՝ առեալ ընդ իւր զզօրս իւր : Իսկ քաղաքն Լամբրուն է առ ընթեր համանուն գղեկին յարեւմուտս կոյս , յորում երեւի ցարդ մնացուած ինչ գերեզմանատան Հայոց , իսկ այժմ գիւղ կամ ձմերանոց տեղացի այլազգեաց :